ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՄԱԿԱԲՈՒՅԾՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԳՀԾՁԲ-ԱԻՆ-18/12-1

ք. Երևան

«15» Դեկտեմբեր 2018 թ.

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը ի դեմս աշխատակազմի ղեկավար Գ.Հայրապետյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ « Պատվիրատու», մի կողմից, և «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ.Պողոսյան որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով և N 1.1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 870 000 (ութ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

...ության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ...ական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ ...պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն	<< Երևանի կանխարգելիչ ախտահանում>> ՓԲԸ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8	ք. Երևան, Խորենացու 160
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 900011001352	Հ/Հ 163068101555
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 00402063
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Գ.Հայրապետյան	Ս.Պողոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«15» 03 20[illegible]թ. *կնքված*
ԳՀՇՁԲ-ԱԻՆ-18/12-1 *ծածկագրով պայմանագրի*

ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՄԱԿԱԲՈՒՅԾՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	90921100/1	Պայքար կրծողների դեմ մեխանիկական եղանակով /թակարդ, վերշա/ և քիմիական մեթոդով՝ օգտագործելով թունաքիմիկատներ /լանիրատ, բրոմդիալոն/, որոնք արգելված չեն ՄԱԿ-ի կողմից և թույլատրվում են ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Ծառայությունը կատարել սպասարկող կազմակերպության բանվորական ուժով և միջոցներով: Տարածքների ուսումնասիրության հաճախականությունն՝ ամիսը 2 անգամ: Ընդհանուր մակերեսը 48416.07 մ2:	ՀՀ դրամ	870 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018 թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար
Գ.Հայրապետյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
<< Երևանի կանխարգելիչ ախտահանում>>
ՓԲԸ
ք. Երևան, Խորենացու 160
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 1600683101555
ՀՎՀՀ 00402063
Տնօրեն
Ա.Պետրոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1,1
« » 20 թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-18/12-1 *ծածկագրով պայմանագրի*

	ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՑԱՆԿ		
	ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության ստորաբաժանումների		
Հ/Հ	Ստորաբաժանման անվանումը	Հասցեն	Ընդհանուր մակերեսը / ք.մ./
1	Երևան քաղաքի N8 հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ. Երևան , Մյասնիկյան 1	1421,6
2	Սպասարկման և տեխնիկայի բազա	քաղ. Երևան , Շիրակի 3-րդ նրբ. N6	3921,9
3	N 3 հրշեջ փրկարարական ջոկատ Երևան քաղաքի վարչություն	քաղ. Երևան, Գլինկայի 13	2127,3
4	N 1 հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ. Երևան, Իսակովի 9/1	976,45
5	N 2 հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ. Երևան, Սևանի 124	965,3
6	N 4 հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ. Երևան, Շարուրի 22/1	1017,4
7	N 5 հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ.Երևան,Ղափանցյան7/3	714,2
8	N 6 հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ. Երևան, Արցախի 4նրբ.5/7	650,8
9	N 7 հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ. Երևան, Հասրացյան9/1	980,6
10	N 9 հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ. Երևան, Գյուլիթեխյան 12/2	729,95
11	Հատուկ հրշեջ ջոկատ	քաղ.Երևան,Ա.Միկոյան109/12	772,1
12	N 10 հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ. Երևան, Նուբարաշեն 11փ.վերջ	484
13	N 11 հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ. Երևան , Աճառյան 44/5	219,9
14	Ծառայողական բնակարան	քաղ. Երևան , Աճառյան 44	146,4
15	Ճգնաժամային կառավարման կենտրոն	քաղ. Երևան , Չարենցի 5/26	602,5
16	Արագածոտնի մարզային փրկարարական վարչություն	քաղ. Աշտարակ Մուղնի թաղ.	430,7
17	Աշտարակի հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ. Աշտարակ , Ղազար Փարպեցու 2	329,8
18	Ապարանի հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ. Ապարան, Գայի 17	470,71
19	Թալինի հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ. Թալին, Երևանյան խճ. 10	1213,78
20	Արագածի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Ծաղկահովիտ 1փող.2շենք	528,78
21	Արարատի մարզային փրկարարական վարչություն	քաղ.Արտաշատ Օգոստոսի 23 նախկին մանկական պոլիկլինիկա	1312,8
22	Արարատի հրշեջ փրկարարական ջոկատ	գ.Սուրենավան,Երևանյան խճ.2	400
23	Արտաշատի հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փող., շ.48	290,4
24	Մասիսի հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ. Մասիս, Բաղրամյան 26	645,5
25	Վեդու հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ. Վեդի, Արցախի 6	429,85
26	Արմավիրի մարզային փրկարարական վարչություն, Արմավիրի հրշեջ փրկարարական ջոկատ	քաղ.Արմավիր փ.Աբովյան 151	3255,9
27	Բաղրամյանի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Մյասնիկյան, Իսակովի 19շ.	82

28	Վաղարշապատի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ, Վաղարշապատ, Աթարբեկյան 11	658,2
29	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչություն			քաղ.Գավառ,Նալբանդյան116	327,2
30	Սևանի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Սևան, Նաիրյան 142	548,51
31	Մարտունու հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Մարտունի, Սայաթ-Նովայի 40	235,3
32	Վարդենիսի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Վարդենիս, Չարենցի 64	247,2
33	Ճամբարակի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Ճամբարակ, Տիգրան Մեծի 1	478,2
34	Գավառի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ.Գավառ ,Ազատամարտիկի 5	518
35	Լոռու մարզային փրկարարական վարչություն			քաղ.Վանաձոր,Տիգրան Մեծի 3/1	422,3
36	Վանաձորի N1 հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Վանաձոր, Երևանյան խճուղի. 62	1157,7
37	Վանաձորի N2 հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ.Վանաձոր,Վարդանանց 6գ.	413,25
38	Սպիտակի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Սպիտակ, Մուրացանի 2	229,5
39	Թումանյանի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Ալավերդի, Թումանյան փող.1	553,4
40	Օձունու հրշեջ փրկարարական հենակետ			քաղ.Օձունի 6փող.4շենք	259
41	Ստեփանավանի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Ստեփանավան, Սուրբ Նշանի 8	290,5
42	Տաշիրի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Տաշիր, Գորկու 18	665,7
43	Գուգարքի հրշեջ փրկարարական ջոկատ			գ. Գուգարք	812,2
	Կոտայքի մարզային փրկարարական վարչություն				
44	Հրազդանի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Հրազդան, Ա.Միքայելյան13	369
45	Աբովյանի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Աբովյան, Հատիսի 4	686,8
46	Չարենցավանի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Չարենցավան, Հոկտեմբերյան 2	403,6
47	Եղվարդի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Եղվարդ, Սաֆարյան 1-ին նրբանցք	164,5
48	Շիրակի մարզային փրկարարական վարչություն			քաղ.ԳյումրիՂուկասյան30/6	930,19
49	Գյումրու N1 հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Գյումրի. Խ.Հայրիկ 38	384,16
50	Արթիկի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Արթիկ, Շահումյան 5	523
51	Ամասիայի հրշեջ փրկարարական ջոկատ			գ. Ամասիա , 2փող.թիվ 4	284,91
52	Անիի հրշեջ փրկարարական ջոկատ			գ. Անի, Շահինյան 3	379,96
53	Աշոցքի հրշեջ փրկարարական ջոկատ			գ. Աշոցք, Գյումրու մայրուղի	376,83
54	Ախուրյանի հրշեջ փրկարարական ջոկատ			գ. Ախուրյան,Ախուրյանի խճ.10/4	295
55	Սյունիքի մարզային փրկարարական վարչություն, Կապանի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Կապան, Ա. Մանուկյան փող. 1նրբ.	2616,6
56	Սիսիանի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Սիսիան. Իսրայելյան 6	480,58
57	Գորիսի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Գորիս, Բակունցի 2	502,3
58	Մեղրու հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Մեղրի, Բաղրամյան 1	235,3
59	Ագարակի հրշեջ փրկարարական հենակետ			գ.Ագարակ Սայաթ-Նովա 26	438,9
60	Քաջարանի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Քաջարան, Լեռնագործների 22	1069,3

	Վայոց Ձորի մարզային փրկարարական վարչություն			քաղ.Եղեգնաձոր,Վ.Գևորգյան 1/2	1003,8
62	Եղեգնաձորի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Եղեգնաձոր, Շահումյան 22	631,3
63	Ջերմուկի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Ջերմուկ, Ձախափնյակի 1բ	670,9
64	Վայքի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Վայք, Մյասնիկյան 15	187,4
65	Տավուշի մարզային փրկարարական վարչություն			քաղ. Իջևան, Արցախյան 4	281,7
66	Իջևանի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ.Իջևան, Վասիլյան 4	302
67	Դիլիջանի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Դիլիջան, Շամախյան 4	687,2
68	Նոյեմբերյանի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Նոյեմբերյան, Կամոյի 1	333,86
69	Տավուշի հրշեջ փրկարարական ջոկատ			քաղ. Բերդ, Թումանյան 1	1240,2
	Ընդամենը				48416,07

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար՝

Գ.Հայրապետյան
ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
<< Երևանի կանխարգելիչ ախտահանում>>
ՓԲԸ
ք. Երևան, Խորենացու 160
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 163068101555
ՀՎՀՀ 00402063
Տնօրեն՝

Ս.Պողոսյան
ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«15» 03 2018թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-18/12-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	90921100/1		-	-	217 500	435 000	435 000	435 000	652 500	652 500	652 500	870 000	870 000	870 000	870 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար՝

Գ. Հայրապետյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<< Երևանի կանխարգելիչ ախտահանում>>
ՓԲԸ
ք. Երևան, Խորենացու 160
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 163068101555
ՀՎՀՀ 00402063
Տնօրեն՝

Ս. Ղոնոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«15» 03 2018թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-18/12-1 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 15 » 03 2018թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-18/12-1 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն